ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՄԽ-01

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի

Թիվ 1 նիստի

13-ը սեպտեմբերի 2024թ.

ԱԺ 314 սենյակ, ժ.14:00

Ս.թ. սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության Մրցութային խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 1-ին նիստը, հետևյալ օրակարգով՝

Օրակարգ՝

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության Մրցութային խորհրդի աշխատակարգի հաստատում,

2. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի սահմանում,

3. Թեկնածուի՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման Հարցարանի սահմանում,

4. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի սահմանում,

5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի մասնակցի գնահատման հարցաթերթի ձևի, գնահատման ենթակա չափանիշների և գնահատման միավորների սահմանում,

6. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստի հաստատում:

Խորհրդի բոլոր հինգ անդամները մասնակցում էին նիստին: Նիստը վարում էր՝ Արթուր Հովսեփյանը

Նիստին մասնակցում էր նաև ԱԺ աշխատակազմից Դիաննա Աթոյանը՝ նիստի արձանագրումն ապահովելու համար:

Օրակարգի 1-ին հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի ընտրության Մրցութային խորհրդի աշխատակարգը:
Խորհրդի որոշումը	*Խրհուրդը որոշեց Աշխատակարգը հաստատել* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 2-րդ հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:
Խորհրդի որոշումը	*Խրհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 3-րդ հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց, Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման Հարցարանի կառուցվածքը և հարցերի շրջանակը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել Թեկնածուի՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման Հարցարանը* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 4-րդ հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը, փաստաթղթային ստուգման և հարցազրույցի փուլերը:
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 5-րդ հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի մասնակցի գնահատման հարցաթերթի ձևը, գնահատման ենթակա չափանիշները և գնահատման միավորները:
Խորհրդի	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել մրցույթի մասնակցի գնահատման հարցաթերթի ձևը, գնահատման ենթակա չափանիշները և*

որոշումը	*գնահատման միավորները:* *Կողմ 5, դեմ 0*
Օրակարգի 6-րդ հարց	Ա.Հովսեփյանը ներկայացրեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստ
Խորհրդի որոշումը	*Խորհուրդը քվեարկությամբ որոշեց հաստատել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստը* *Կողմ 5, դեմ 0*

Նիստը վարող՝ Ա.Հովսեփյան

Նիստի քարտուղար՝ Դ.Աթոյան